

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐԶԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

04.10.2014

Հարգելի մանակավարժներ

Դուք մտքի բանակի այն նվիրյալ զինվորներն եք, ովքեր կրում ու մատաղ սերնդի հոգիներում սերմանում են հայոց բազմադարյան դպրությունն ու գիտությունը, ազգային ու համամարդկային մտքի նվաճումները, կրթում ու դաստիարակում Հայաստանի Հանրապետության այսօրվա ու վաղվա կիրթ, զարգացած ու հայրենասեր քաղաքացուն:

Ուսուցչի օրվա առթիվ սրտանց շնորհավորում եմ Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի մանակավարժների տոնը, մաղթում խաղաղ երկինք, առողջություն, երջանկություն ու հաջողություններ անձնական կյանքում, անսպառ եռանդ ու նվիրում՝ միշտ պատասխանատու եւ պատվաբեր աշխատանքում:

Լավագույն ցանկություններով՝ Գեղարքունիքի մարզպետ
Ռաֆիկ Գրիգորյան